# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

**Հասցեատեր՝**
«Վան ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcvan2019@gmail.com

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25.04.2025թ.**

| | |
|---|---|
| Նախագահ | Կարեն Հովհաննիսյան |
| Անդամներ | Արփի Նազարյան |
| | Հենրիկ Խաչատրյան |

---

| | |
|---|---|
| **Վարույթ՝** | ՀԳԽ-022 |
| **Խախտում՝** | 1. «Վան» թիմի մարզիչ Գեորգի Ղազարյանի (27188) կողմից մրցակից թիմի անձնակազմի անդամի հասցեին հայհոյանք հնչեցնելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ)<br>2. Խաղի ժամանակահատվածում հյուր թիմի երկրպագուի կողմից ֆուտբոլիստի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ) |
| **Առաջնություն՝** | Հայաստանի Գավաթի Խաղարկություն |
| **Խաղ՝** | «Նոա» - «Վան», 16.04.2025թ. |

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Վան» թիմի մարզիչ Գեորգի Ղազարյանին (27188) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի ապրիլի 16-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Վան ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի՝ 80,000 ՀՀ դրամի չափով: Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 13-րդ հոդվածի 17-րդ կետը՝ որակազրկումը տարածվում է ՀՖՖ կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր մրցումների վրա:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 4-րդ կետը՝«Վան ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ չկիրառել որևէ պատասխանատվության միջոց:

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝**

**Կարեն Հովհաննիսյան**

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: